

(Հրց. 553). ուրեմն աւելի քան մի անգամ: Բայց կ'երեւի՝ թէ իւր օրով այնքան ստիպողական չէր գառնը, որով կարելի էր մորթել զատկին «գառն կամ ոչ խար կամ այլ ինչ» (Քրզ. ձմր. 606):

3. — Վայրը: — Շնորհալին ջանալով զառին տրուած չափազանց ու գայթակղեցուցիչ կարեւորութիւնը մեղմել, կը պատուիրէր՝ որ զայն մորթեն անխտիր «յորում տեղւոջ հանդիպի», նման ուրիշ անասնոց (Բնդհ. 160): Ուրեմն սովորութեան մէջ կապուած էր յատուկ տեղւոյ մը հետ, որ անտարակոյս եկեղեցին էր, ուր կ'օրհնուէր նման տեառնականին ու հոգեհանգստեան, եւ նոյն իսկ կոչուած է նաեւ «տեառնականն զատկի» (Հրց. 362): Ոչ միայն եկեղեցին կը մորթուէր, այլ հոն ալ կ'ուտուէր, ինչպէս կը զգացնէ մեր առակախօսը, աղուեսին ըսել տալով գայլուն. «Վաղիւ գատիկ է, տարայց զքեզ յեկեղեցին՝ զի կերիցես մատաղ» (Գոշ՝ Առկ. 79). եւ ինչպէս պիտի տեսնենք քիչ վար՝ 1345ի մաշտոցի մը մէջ եւս: Արղարեւ ծԲ դարու Լատիններն ալ խորովելով զայն, «դնեն ի խորանն ընդ Պատարագան», կ'ըսէ Շնորհալին (Բնդհ. 160), այս ինքն Ս. Պատարագը մատուցանելու պահուն: Այս սովորոյթը, անձանօթ եւրոպացի հը-